6034

J. JEANSON

ԿԱՍԹՈՆ ԵՒ ԼԻԼԻ

(Գօմէսի մէկ արար)

Թարգմանեց Ֆրանսերէնէ

Տիկին Պ. ԵՐԵՍԱՊ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ՏՊԱԳՐ. Ա. ԳԱՍԱՊԵԱՆ

1932

84
Հ-29

84
Ժ-29
18 NOV 2011
20 APR 2006

ԿԱՍԹՈՆ ԵՒ ԼԻԼԻ

(Գօմէօի մէկ արար)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԼԻԼԻ

ԿԱՍԹՈՆ . . Լիլիի ամուսինը

ԺԱԳ . . . Կասթոնի բարեկամը

ՏԵՍԻԼ Ա.

ԼԻԼԻ, ԿԱՍԹՈՆ

ԼԻԼԻ. — *Այո՛։*

ԿԱՍԹՈՆ. — *Ո՛չ։*

ԼԻԼԻ. — *Այո՛։*

ԿԱՍԹՈՆ (Հանդարտութիւնը պահել չանալով). — *ո՛չ, Լիլի, ո՛չ։*

ԼԻԼԻ (Ն.մանապէս). — *Այո՛, Կասթոն, այո՛։*

ԿԱՍԹՈՆ. — *Ո՛չ... այս իրիկուն չպիտի երթաս, կ'արգիլեմ քեզ։*

ԼԻԼԻ (Հնազանդութեամբ). — *Լաւ, պարահանդէս չեմ երթար։*

ԿԱՍԹՈՆ (Գոհ). — *Այո՞... ահա այդպէս։*

25 APR 2013

6034

ԼԻԼԻ. — Ձեմ երթար պարահանդէս... արդէն հիմա ո՞վ կ'երթայ որ։

ԿԱՍԹՈՆ. — Այնպէս չէ՞։

ԼԻԼԻ. — Բայց տանսինկ պիտի երթամ։

ԿԱՍԹՈՆ (Ինքնիրմէ ելած). — Ի՞նչ։

ԼԻԼԻ. — Ի՞նչը ինչ... դեռ մէկ անգամ չեմ հագեր գիշերուան հագուստս. նորաձեւութիւնը անցնելէ ետք, եկող տարի ինչի՞ պիտի ծառայէ այդ հագուստը։

ԿԱՍԹՈՆ. — Ուրեմն ամէն տարի մէյ մէկ հագուստ պէտք է ունենաս գիշերուան համար։

ԼԻԼԻ. — Բնականաբար։

ԿԱՍԹՈՆ. — Կարծեմ թէ կը չափազանցես։

ԼԻԼԻ. — Ե՞ս... ազէկ հաշուէ... մէկ տարուան մէջ 365 գիշեր կայ և ես ամբողջ տարին մէկ գիշերուան հագուստ միայն կը չինեմ. . 1/365 երրորդ հագուստ և տակաւին գոհ չես..

ԿԱՍԹՈՆ (Ուսերը թօքուելով). — Պարապ խօսքեր։

ԼԻԼԻ. — Այո՛, պարապ խօսքեր, բայց, աչքերդ դարձուր մէյ մը բարեկամներուդ կիներուն վրայ, բաղդատէ զիս անոնց հետ և անկեղծօրէն ըսէ թէ ո՞վ է աւելի պահանջքոտ, ե՞ս թէ անոնք։

ԿԱՍԹՈՆ. — Պէտք չունիմ զբաղելու բարեկամներուս հետ... ես բարեկամներուս կիներուն հետ չէ որ ամուսնացած եմ...

ԼԻԼԻ. — Եթէ ուզէիր ալ չպիտի կրնայիր ընել, քանի որ արգիլուած է բազմակնութիւնը։

ԿԱՍԹՈՆ. — Բաւական է, Լիլի, հաւատա, պատ-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԻՄ. Ա. Մասիսյանի անվ.

ւոյս վրայ կ'երդնում որ, չպիտի երթաս այս իրիկուն տանսինկ։

ԼԻԼԻ. — Ես ալ մօրս գլխուն վրայ կ'երդնում որ պիտի երթամ ա՛յս իրիկուն։

ԿԱՍԹՈՆ. — Ազէկ, կը տեսնենք։

ԼԻԼԻ (Պոռթկալով). — Գիտեմ, գիտեմ արդէն թէ որքան բարեացակամ ես մօրս հանդէպ... մասնաւորաբար պիտի արգիլես զիս այս գիշեր, որպէս զի երդումիս համաձայն մաման մեռնի, անանկ չէ՞...։ Ա՜հ, Կաստոն, Կաստոն, զգուշացիր անդարմանելի սխալներու մէջ իյնալէ։

ԿԱՍՏՈՆ. — Բայց ի՞նչ պէտք կայ միշտ մամայիդ գլուխը մէջտեղ դնելու։

ԼԻԼԻ. — Ե՞ս մէջտեղ կը դնեմ մամային գլուխը։

ԿԱՍԹՈՆ. — Այո՛, գրեթէ միշտ։

ԼԻԼԻ. — Մօրս գլուխը՞։

ԿԱՍԹՈՆ. — Այո՛, ամէն ատեն, բայց գիտցած եղիր որ ատիկա սպառնալիք մը չէ ինծի համար։

ԼԻԼԻ. — Իրաւ կ'ըսես։

ԿԱՍԹՈՆ. — Այո՛, իր ազդեցութիւնը կորսնցուցած է այլեւս։

ԼԻԼԻ. — Ի՞նչը։

ԿԱՍԹՈՆ. — Մամայիդ գլուխը։

ԼԻԼԻ. — Կ'աղաչեմ, այդ ձեւով մի՛ խօսիր մօրս մասին։

ԿԱՍԹՈՆ. — Կարծեմ թէ գէշ բան մը չըսի և ահա կը կրկնեմ, 100 ֆրանք գրաւ կը դնեմ որ չպիտի երթաս այս իրիկուն։

45801-

ԼԻԼԻ — Ես ալ մէկին դէմ 500՝ գրաւ կը դնեմ որ պիտի երթամ այս իրիկուն մանաւանդ որ գիտես թէ բարեկամդ՝ Ժագը զիս հրաւիրած է և ես ընդունած եմ իր հրաւէրը. բնականաբար խօսքս ետ չեմ կրնար առնել... ես կրթուած կին մըն եմ։

ԿԱՍԹՈՆ. — Աղէ՛կ խորհէ, Լիլի։

ԼԻԼԻ. — Ես շատ լաւ խորհած եմ։

ԿԱՍԹՈՆ. — Աղէկ, շատ աղէկ, կը տեսնենք յետոյ...

ԼԻԼԻ. — Անիրաւ մի՛ ըլլար. Կասթոն, ես արգելք կ'ըլլա՞մ քու ակումբ երթալուդ։

ԿԱՍԹՈՆ. — Ձեզ ըլլար, որովհետև չես սիրեր զիս, եթէ քեզ սիրածիս մէկ քսաներրորդն ալ դուն զիս սիրէիր, շատոնց արգիլած պիտի ըլլայիր։

ԼԻԼԻ. — Տէ՛ր Աստուած, կը սիրեմ քեզ, բայց չեմ ուզեր քեզ զրկել հաճոյքէդ.. դուն սէրը և բարեկամութիւնը կը շփոթես իրարու հետ։

ԿԱՍԹՈՆ. — Դուն ալ հաճոյքն ու պարը կը շփոթես իրարու հետ։

ԼԻԼԻ. — Ե՞ս... ուրեմն տխմարին մէկն եմ չըսե՞ս։

ԿԱՍԹՈՆ (Հաւեսարար շեշտով մը). — Լիլի՛, սիրե՛լիս։

ԼԻԼԻ (Հեգնանքով), — Սիրելի՞ս, իմ սէ՛ր, ինչպէս ալ կը վայելեն այդ բառերը շրթունքներդ, երբ դեռ անոնց իմաստն անգամ չես գիտեր։

ԿԱՍԹՈՆ. — Եթէ չեմ գիտեր կը սորվեցնես ինծի։

ԼԻԼԻ. — Աւելի լաւ պիտի ընէիր, եթէ քիչ մը պարել սորվէիր։

ԿԱՍԹՈՆ. — Ձեմ ուզեր ոտքերովս պարապիլ։

ԼԻԼԻ. — Ձես ուզեր պարապիլ, որովհետև չես սիրեր զիս, եթէ քեզ սիրածիս մէկ երեսուներրորդն ալ դուն զիս սիրէիր, անպայման պարել պիտի սորվէիր, որպէսզի զիս տանսինկ տանէիր։

ԿԱՍԹՈՆ. — Կը սիրեմ քեզ, բայց կ'ատեմ այդ պարասրահները։

ԼԻԼԻ. — Որովհետև պարել չես գիտեր։

ԿԱՍԹՈՆ. — Ո՞հ, ի՞նչ մեծ բան. քանի մը ոտքի շարժում, գնա, եկուր, դարձիր, յետոյ ժամ մը կեցիր չիշ մը շամբանկալին առջև, քանի մը անհամ կատակ, ճաշի սարսափելի աղմուկ, քունը աչքերէդ կը վազէ, կը նեղուիս, կը ձանձրանաս և դրամովդ կը տանջուիս չարաչար,

ԼԻԼԻ. — Որովհետև խմել չես գիտեր։

ԿԱՍԹՈՆ. — Ո՞վ ըսաւ։

ԼԻԼԻ. — Ես։ Դուն ո՛չ խմել գիտես, ո՛չ ալ պարել. չեմ գիտեր ի՞նչ տեսակ կրթութիւն է ստացածդ, հազիւ թէ գաւաթ մը կը խմես և ահա կ'սկսիս խենթ ու խելառ խօսքերու։

ԿԱՍԹՈՆ. — Ե՞ս, ընդհակառակը, շամբանեան կ'ոգեւորէ զիս։

ԼԻԼԻ. — Այո՛, կ'ոգեւորէ... և վստահ եմ որ այս պահուս արդէն երեք գաւաթ խմած ես։

ԿԱՍԹՈՆ. — Ի՞նչ կ'ըսես։

ԼԻԼԻ (Հեգնելով). — Կաս... թոնթոնթոնթէն...

ԿԱՍԹՈՆ. — Ի՞նչ... թէն թէնթէն։

ԼԻԼԻ. — Կաս.. թոնթոնթէն... անուշիկ սիրուն կրճատու�է այս։

ԿԱՍԹՈՆ. — Կրճատո՞ւմ թէ երկարում։

ԼԻԼԻ (Շեշտը փոխելով). — Ա՜հ, ի՜նչ սիրուն է։

ԿԱՍԹՈՆ. — Ինչը՞, կրճատո՞ւմը... բէ՜օհ...

ԼԻԼԻ. — Ո՛չ, ժագը, բարեկամդ, հիանալի կը պարէ։

ԿԱՍԹՈՆ. — Ծոյլը։

ԼԻԼԻ. — Ինչո՞ւ... շատ հաճելի երիտասարդ մըն է։

ԿԱՍԹՈՆ. — Անճարակին մէկը։

ԼԻԼԻ. — Շատ հաճոյակատար։

ԿԱՍԹՈՆ. — Թուլամորթ մը։

ԼԻԼԻ (Կոպտօրէն). — Պարզապէս կը նախատես զինքը, որովհետև կը նախանձիս։

ԿԱՍԹՈՆ. — Ե՞ս նախանձիմ ժագէն...

ԼԻԼԻ. — Այո՛, չէ՞ որ կ'արգիլես զիս իրիկուն մը իրեն հետ անցընել։

ԿԱՍԹՈՆ. — Ե՛ս կ'ուզեմ որ ինծի հետ մնաս այս իրիկուն և ուրիշ բան չեմ զիտեր։

ԼԻԼԻ (Համակերպած). — Այո՛, ես ալ միայն գիտեմ որ կը նախանձիս և ուրիշ ոչինչ։

ԿԱՍԹՈՆ. — Կին մը պէտք է իր ամուսնոյն հետեւի։

ԼԻԼԻ. — Ի՞նչպէս կ'ուզես որ հետեւիմ քեզ, քանի որ աթոռիդ վրայ գամուեր մնացեր ես։

ԿԱՍԹՈՆ. — Լա՛ւ, աբառդըմանին շրջանը ընենք։

ԼԻԼԻ. — Սքանչելի առաջարկ (լուրթիւն)։

ԿԱՍԹՈՆ (Ցանկարծ). — Ա՜, ո՛չ, ո՛չ։

ԼԻԼԻ. — Ի՞նչ։

ԿԱՍԹՈՆ (Արհամարանքով). — Երբէք չեմ նախանձիր ժագէն։

ԼԻԼԻ. — Իրա՞ւ... կարծեմ թէ շատ ալ անկեղծ չես։

ԿԱՍԹՈՆ. — Ես վստահութիւն ունիմ իր վրայ։

ԼԻԼԻ. — Ուրեմն իմ վրայ վստահութիւն չունիս չէ՞... լաւ, շատ լաւ, շատ շնորհակալ եմ... ահա՛ վարձատրութիւնը իմ երեք երկար տարիներու հաւատարմութեանս։

ԿԱՍԹՈՆ (Մեղմացած). — Հանդարտէ, Լիլի, ես բացարձակ վստահութիւն ունիմ քու վրադ ալ, ժագին վրան ալ... ժագը տխմարին մէկն է։

ԼԻԼԻ. — Ուրեմն ե՞ս ալ տխմար եմ։

ԿԱՍԹՈՆ (Զանձրացած). — Օ՜ֆ... բայց ո՛չ, ո՛չ, դուն շատ խելացի ես, շատ լաւ ես, ես քեզի համար բան մը չըսի ժագին համար է որ կ'ըսեմ թէ տըխմար է ... այդ տխմարութիւնը ինծի ծանօթ է մանկութենէն ի վեր, իսկ մինչև այսօր, չի տեսայ իր վրայ ո՛չ մէկ փոփոխութիւն, ո՛չ մէկ յատկութիւն, ընդունակութիւն ձիրք, երեւակայութիւն, ոչի՛նչ, ոչի՛նչ։ Կը խորշի կիներէն. միակ զբաղումն է գրաշմաթուղթեր. ո՛չ հագուիլ գիտէ, ո՛չ փողկապ կապել, և ո՛չ իսկ եղունգները խնամել։

ԼԻԼԻ. — Բայց սքանչելի կը պարէ։

ԿԱՍԹՈՆ. — Այո՛, այդ մասին ըսելիք չկայ, շատ ճարպիկ է ոտքերը շարժելու մէջ։

ԼԻԼԻ. — Շատ ալ սրամիտ է։

ԿԱՍԹՈՆ. — Թող որ խնդամ քիչ մը (կը խնդայ)։

ԼԻԼԻ. — Վայելուչ ալ է։

ԿԱՍԹՈՆ. — Կ'աղաչեմ, մի՛ ծաղրեր։

ԼԻԼԻ. — Երբէ՞ք, և ի՞նչ գեղեցիկ աչքեր։

ԿԱՍԹՈՆ. — Որոնք բնաւ արտայայտութիւն չունին։

ԼԻԼԻ. — Արտայայտութիւն չունի՞ն։

ԿԱՍԹՈՆ. — Ոչ իսկ նշոյլ մը։

ԼԻԼԻ. — Ընդհակառակը... և գիտե՞ս որ՝ շատ ծիծաղելի կը գտնեմ քեզ, Կասթո՛ն... բարեբախտաբար մինակ ենք, եթէ ոչ, մտիկ ընող մը պիտի կարծէր թէ իրապէս տխմար մըն եմ, որ կը հանդուրժեմ այդքան անիրաւ խօսքերուդ։ Դուն որ այդքան կը քննադատես ժագը, ինքզինքդ նայա՞ծ ես անգամ մը հայելիին մէջ։

ԿԱՍԹՈՆ. — Ամէն օր կը տեսնեմ ինքզինքս։

ԼԻԼԻ. — Եւ տանելի կը գտնե՞ս։

ԿԱՍԹՈՆ. — Ինչո՞ւ չէ։

ԼԻԼԻ. — Դիտա՞ծ ես փողկապդ... ո՛չ. լաւ գիտցած եղիր որ շատ գէշ կապուած է. դիտա՞ծ ես նաև շապիկներդ որոնք բոլորովին անճաշակ են։

ԿԱՍԹՈՆ (Ծաղրանքով). — Այո՞։

ԼԻԼԻ. — Այնքա՛ն որ մարդ չուզէր նոյնիսկ նայիլ անոնց յետոյ, քանի որ մեր խօսակցութիւնը աչքերու շուրջ կը դառնայ, թոյլ տուր որ ըսեմ թէ՝ քու աչքերդ այ շատ սովորական են իրենց գոյնով և արտայայտութիւնով։ Այո՛, կան մարդիկ որոնց նայուածքները խօսուն ու արտայայտիչ են, բայց կը ցաւիմ ըսելու որ քուկիններդ՝ բացարձակապէս զուրկ են այդ շնորհէն. գալով եղունգներուն, եթէ ժագ անխնամ կը թողու իր եղունգները, գիտցիր որ դուն

կը կրծես զանոնք... իսկ եզրակացութիւն, առանց սպասելու հրամանիդ, ժագին հետ պիտի երթամ այս իրիկուն։

ԿԱՍԹՈՆ (Հանդարտ). — Բան մը կայ որ շատ կը զարմացնէ զիս։

ԼԻԼԻ. — Ի՞նչը։

ԿԱՍԹՈՆ. — Ա՛յն թէ ինչպէ՞ս այդ երկար մենախօսութիւնդ չընդմիջեցի երկու շառաչուն ապտակով։

ԼԻԼԻ. — Վայրենի՛, վայրենի՛, հիմա ալ կ'ելլես կի՞նդ ծեծելու։

ԿԱՍԹՈՆ. — Կ'աղաչեմ, դեռ չի դպայ։

ԼԻԼԻ. — Այո՛, չի դպար, բայց մեռցուցիր զիս բարոյապէս։

ԿԱՍԹՈՆ. — Պիտի խնդրէի որ չի չափազանցնէիր։

ԼԻԼԻ (Լալով). — Եթէ մամային պատմեմ այս բանը...

ԿԱՍԹՈՆ. — Ի՞նչ բան։

ԼԻԼԻ. — Եթէ գիտնայ որ զիս ծեծեցիր...

ԿԱՍԹՈՆ. — Ե՞ս քեզ ծեծեցի՞։

ԼԻԼԻ. — Այո՛, այո՛, զիս ծեծեցիր և յաւիտեան չպիտի մոռնամ այս բանը։

ԿԱՍԹՈՆ. — Ի՞նչ բան։

ԼԻԼԻ. — Զիս ծեծեցիր և այս պահուս զգացած վրդովմունքս յաւիտեան պիտի մոռնամ, բայց այնքան բարի և ազնիւ եմ որ բնաւ յայտնի չպիտի ընեմ երբ ժագին հետ տանսինկ երթամ այս իրիկուն...։

(Դուռը կը զարնեն։)

ՏԵՍԻԼ Բ.

ԼԻԼԻ, ԿԱՍԹՈՆ, ԺԱԳ

ԼԻԼԻ. — Մտէ՛ք։

ԺԱԳ (Մտնելով). — Բարև Լիլի, բարև Կասթոն։

ԿԱՍԹՈՆ (Սառն).— Բարև։

ԼԻԼԻ (Ժագին). — Նստեցէ՛ք, խնդրեմ, մէկ վայրկեանէն արդէն պատրաստ եմ։

ԺԱԳ (Լիլիին). — Ա՜հ, կը ներէք... շատ կը ցաւիմ, բայց ներեցէք ինծի, ձեզի չպիտի կրնամ ընկերանալ այս գիշեր... ստիպուած եմ Քրիստինէին տունը երթալ։

ԿԱՍԹՈՆ. — Քրիստինէ՞... ո՞վ է Քրիստինէն։

ԺԱԳ. — Ը... ը... այո՛, նշանածս։

ԿԱՍԹՈՆ (Զարմացած). — Նշանա՞ծ... երբէ՞ն ի վեր։

ԺԱԳ. — Հազիւ թէ հինգ օր է։

ԼԻԼԻ (Կասթոնին). — Կը տեսնե՞ս կիներէն փախչողը։

ԺԱԳ. — Քրիստինէն խնդրեց ինձմէ այս իրիկուն իրեն հետ անցընել և այնքան պնդեց որ... կը հասկնա՞ս, Լիլի... չի կրցի մերժել զինքը։

ԿԱՍԹՈՆ. — Հոգ չէ, հոգ չէ, ես շատ լայնախոհ եմ... բոլորովին ազատ էք, ինչպէս որ կ'ուզէք։

ԺԱԳ. — Ա՜հ, ի՜նչ ազնիւ էք որ զիս ազատ կը թողուք, ուրեմն շնորհակալութի՜ւն և ցտեսութիւն, Լիլի, ցտեսութիւն, Կասթոն։ (Կը մեկնի)։

ՏԵՍԻԼ Գ.

ԿԱՍԹՈՆ, ԼԻԼԻ

ԿԱՍԹՈՆ (Լիլիին). — Ի՞նչպէս կը գտնես զինքը։

ԼԻԼԻ. — Կ'ազաչեմ, սա ապուշին խօսքը մի ըներ։

ԿԱՍԹՈՆ. — Չէ՞, ըսածիդ չափ ալ չէ։

ԼԻԼԻ. — Ի՞նչ սարսափելի եղունգներ։

ԿԱՍԹՈՆ. — Ո՛չ, այնքան ալ չէ։

ԼԻԼԻ. — Կ'ազաչեմ, պաշտպանելու մի՛ ելլեր։

ԿԱՍԹՈՆ. — Զինքը չեմ պաշտպաներ, բայց իրաւունք չունիս այդքան ալ արհամարելու։

ԼԻԼԻ (Հառաչելով). — Օ՜ֆ (դեմքը կախած լուռ կը նստի)։

ԿԱՍԹՈՆ. — Երկար պիտի մնա՞ս այդ գիրքին մէջ։

ԼԻԼԻ. — Որքան ատեն որ ուզեմ։

ԿԱՍԹՈՆ. — Բայց անշուշտ ո՛չ ամբողջ կեանքիդ տեւողութեանը... հետեւաբար աւելի լաւ կ'ընես եթէ հիմակուընէ չտկես գեղեցիկ դէմքդ՝ որ ի զուր տեղ կը տգեղնայ այդպէս խոժոռ մնալով։

ԼԻԼԻ (Ժպտելով). — Բայց կարծեմ թէ խոժոռ երեւոյթ մը չունիմ։

ԿԱՍԹՈՆ. — Գռաւո՜, ահա այդպէ՛ս, ուրեմն հաշտուած ենք և իմ մօտս պիտի մնաս այս իրիկուն։

ԼԻԼԻ. — Քանի որ կը պնդես։

ԿԱՍԹՈՆ. — Միասին պիտի ընթրենք սիրահարներու պէս, ինչպէս երեք տարի առաջ... կը յիշե՞ս...

ԼԻԼԻ. — Նո՞յն խանդաղատանքով։

ԿԱՍԹՈՆ. — Անշուշտ... յետոյ ձեռքդ պիտի

խնդրեմ...այս անգամ ալ պիտի ընդունի՞ս առաջարկս։

ԼԻԼԻ. — Չեմ կրնար բան մը ըսել հիմակուընէ։

ԿԱՍԹՈՆ. — Ա՜հ, ի՜նչ չարաճիճի, ի՜նչ ազնիւ ես Լիլի. հիմա որ հաշտուեցանք և կը խոստանաս մօտս մնալ, կ'ուզեմ քեզի հաճոյք մը պատճառել... գիտե՞ս ինչ, քեզի տանսինկ պիտի տանիմ։

ԼԻԼԻ. — Պիտի ընե՞ս այդ բանը։

ԿԱՍԹՈՆ. — Ինչո՞ւ չէ՛, սիրելի՛ անառակս... հիմա հոս քովս եկուր... նստէ՛ այստեղ և լսէ՛ ինծի։

ԼԻԼԻ. — Ականջներս քուկդ են։

ԿԱՍԹՈՆ. — Լիլի՛, դուն անտանելի արարած մըն ես, յամառ, պչրասէր, ստախօս, մտասեւեռումդ է միակ զբօսանք և զարդարանք, փոփոխամիտ ես, խօսքերդ կը փոխես չապիկիդ պէս և չապիկներդ քըմահաճոյքներուդ պէս. կը վիճաբանիս այնպիսի ձեւով մը որ գլխու պտոյտ կը պատճառես, բայց գիտե՞ս ինչ... չեմ փափաքիր, չեմ ուզեր որ սրբագրես ինքզինքդ... Մնացիր այդպէ՛ս Լիլի, այնպէ՛ս ինչպէս որ ես, որովհետև այդ բնաւորութեամբդ է որ կը սիրեմ քեզի և կարծեմ թէ պիտի ատէի քեզ՝ եթէ միշտ իմ կարծիքս ըլլայիր։

ԼԻԼԻ. — Ի՞նչ կ'ըսես, ճշմարի՞տ է։

ԿԱՍԹՈՆ. — Այո՛, ճշմարիտ է։

ԼԻԼԻ. — Ուրեմն շուտ հանէ կօշիկներդ և անմիջապէս հագիր մուճակներդ, այս գիշեր տանսինկ չպիտի երթանք։

ԿԱՍԹՈՆ. — Պիտի երթանք։

ԼԻԼԻ. — Ո՛չ։

ԿԱՍԹՈՆ. — Այո՛։

ՎԱՐԱԳՈՅՐ

ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԽՄ. А. МАСХ...
ՄՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴ.

Հայաստանի Ազգային գրադարան
NL0429979